

**ԻՄԱՍՏՈՒՆ ՏՂԵՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
քարքառ (խոսվածք)**

Էլել են մի մարթ, մի կնիկ: Դրանք ըրեխա չեն ունեցել: Քսան տարի կացել են, մինն էլել ա:
Իմաստուն ա էլել, եդո ով տարով, նա օրով ա վենձանալիս էլել:

Մերն ասել ա.— Քու հերը չութ ա վարըմ, քու հոր հմար հաց տար հանդը:

Հացը տարել ա, տեհել ա հրես հոր չթի կշտին վարժապետը մոնթերի հետ սեհրն ա անըմ:
Մոնթերի միչին թաքավորի ախչիկն էլ ա ըլըմ:

Տղի հերը դրանց ասըմ ա.— Էկեք հաց ուտենք, դրանք գալիս չեն:

Մոնթերից մինը թաքավորի ախչկա սիրածն ա ըլըմ, ախչկա շորեր հաքած: Էդ իմաստուն
տղեն հսկանըմ ա ու դրանց վրա ծիծաղըմ ա: Ըրիգունը թաքավորի ախչիկը գնըմ ա տուն,
սուտ հիվանդանըմ ա:

Հերն ասըմ ա.— Ի՞նչ կուտես, ախչիկ ջան:

Ասըմ ա.— Մի բան էլա ուզըմ չեմ: Որ շատ հերը տեղը նեղըմ ա, ասըմ ա.— Հայրիկ, թե կզնաս
չթչու տղեն կբերես, կմորթես, թոք ու ջիգարը կտասս ինձ՝ ուտեմ, կլավանամ, թե չէ՝ խու
լավանալ չեմ:

Թաքավորը գալիս ա չթչուն ասըմ ա.— Քու տղեն ինձ վրա ծախե, իրան քաշով մին ոսկի
կտամ:

Մերը շատ ա դեմ ը՛նգնըմ, հմա դե թաքավորից վախըմ են, տալիս են:

Տղին տանըմ են, որ մորթեն:

Տղեն ասըմ ա.— Էս չախին ինձ մորթիլ մեք, ըռավողը կմորթեք:

Թաքավորը տղին տալիս ա մի մարթի, ասըմ ա.— Պեհ, ըռավողը կբերես մորթեմ: Հմա ասըմ
ա, որ փախչի, մի բան ըլի, քիանի կուզեմ:

Որ տանըմ ա տուն հա, տղեն ասըմ ա:— Ինձ մորթիլ տին, արի քի մի բան ասեմ, վախիս ոչ, քի
ես քոմագ կանեմ, քու լավութենիցը դուս կգամ եդնա, արի ինձ լսե, ձեր գեղըմը մի տղա ա
մեռել էրեգի, իմ կապսի ու չափսի տղա ա, գնանք բերենք իմ տեղը դնենք: Որ գա ասե.— Խի՞ ա
մեռել: Ասա.— Վախիցն ինքը սիրտը գնաց, էլ եդ չեկավ:

Թեհնց են անըմ:

Ըռավողն ասըմ են.— Տղեն բի: Ասըմ ա.— Իմացավ, որ մորթիլ տին, վախիցը չորացավ:

Էնա տանըմ են, էդ մեռածի թոք ու ջիգարը հանըմ են, ուտացնըմ են ախչկանը (կրակ ուտե
նա) ախչիկը վի ա կենըմ:

Էն տղեն գնըմ ա ձուզն ա բոնըմ, բերըմ ա թաքավորի դռանը դի տալի.— Ձուզն եմ ծախըմ,
ձուզն եմ ծախըմ:

Ախչիկն ասըմ ա.— Թե էք ա, կառնիմ, թե որց ա՝ առնիլ չեմ:

Տղեն էլի ծիծաղըմ ա, թե.— Ձգան էքն ու որցը ո՞րն ա:

Ախչիկն էլ եդ հորն իմաց ա տալի, թե.— Ասըմ եմ էդ տղին կորցրու էլի, նա իմ ամեն ասած
բանի վրա ծիծաղըմ ա:

Թաքավորն ասըմ ա.— Ես քու գլուխը տալ պտիմ:

Տղեն ասըմ ա.— Իրեք խոսկ տիմ ասիլ, եդնա տալիս ես՝ տուր:

Ասըմ ա.— Ասա՛:

Ասըմ ա.— Մի մարթ ու կնիկ են ըլըմ, քանի ըրեխա են ունենըմ, դուշը գալիս ա ուտըմ: Մի օր
էլ դուռ ու ակոշկա փագըմ են, գնըմ են հրսանիք: Տանը մենակ կատուն ա մնըմ: Դուշը եդ տեղ
ա գդնըմ, տուն ա մտնըմ, որ ըրեխին եդ ուտն: Կատուն դշին խեխտըմ ա, ինքն էլ

արնաթաթախ ա ըլըմ, դշին ընդի վեր ա ածըմ: Նրանք որ տուն են գալիս հա, կատուն գնըմ ա նրանց ոտներովն ընգնըմ: Կատվին որ արնըմը շղաղված տենըմ են, հե գիդենըմ են՝ ըրեխին կերել ա, տալիս են՝ սպանըմ: Եղնա տենըմ են՝ ըրեխեն սաղ ա, դուշն էլ ընդի սպանած:

Հմի ինչքա՞ն դարդ կանեին էդ կատվի հմար, որ իրանց ըրեխին ազատել ա:

Մի մարթ էլ դշահապկեն լիզը ոսկի ա տանելիս ըլըմ, թագին էլ եղնեն: Ոսկին ճամփըմը վեր ա ընգնըմ: Թագին գալիս ա ձիու ոտներն ա ընգնըմ, իմաց ա տալի, տերը հսկանըմ չի, տալիս ա սպանըմ: Թագին գնըմ ա դշահապկի կշտին սատկըմ: Տերը տուն ա գնըմ, տենըմ ա դշահապկեն կա ոչ: Եդ ա գալի, տենըմ ա թագին կոխկին սատկած ա: Ինչքա՞ն դարդ կաներ թագու հմար:

Մի մարթ էլ ծմակըմը փետ անելիս ա ըլըմ: Շատ ծրավըմ ա: Տենըմ ա՝ մի տեղից ջուր ա կաթըմ: Ըստաքանը տակին ա դնըմ, որ լցվի՝ խմե: Դուշը գալիս ա, վեր ա ածըմ: Տալիս ա դշին սպանըմ ա: Գնըմ ա տենըմ օցն ընդի սատկած ա, նրա եղուն ա կաթըմ: Հմի դարդ չէ՞ր անիլ էդ դշի հմար:

Ախչիկը հորն ասըմ ա.— Էդ շան տղի գլուխը կտրե, քանի՞ գլուխս ցավացնե:

Տղեն ասըմ ա.— Ախչկանդ հետի մոնթերին հլա սկլորե, տես դրանց հետ որց էլ կա՞, թե հլե չիմ էք են:

Էնա թաքավորը տկլորըմ ա, տենըմ ա մինը որց ա: Էնա թաքավորն իրան ախչկանը ստկացնըմ ա, էդ իմաստուն տղին իրան տղացու շինըմ, հրսանիք ա անըմ, օխտն օր, օխտը քշեր քեփ անըմ: Վայ տամ նրա ախչկա գլխին, ձգնիցն էք ու որց հարցնե՞ր, դե թող գնա: